

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
12 սեպտեմբերի 2006 թ.
Պետական գրանցման թիվ 10206283

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

30 օգոստոսի 2006 թ.
ք. Երևան

թիվ 167-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐՂԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35.1. հոդվածի 6-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել հարկադիր էլեկտրոնային աճուրդի հրապարակային ծանուցման և
մասնակիցների գրանցման կարգը (հավելված N 1) կցվում է:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
տասներորդ օրը:

Դ. Հարությունյան

Հավելված N 1
ՀՀ արդարադատության նախարարի
2006 թվականի օգոստոսի 30-ի
թիվ 167-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐՂԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (այսուհետ՝
Ծառայություն) կողմից անցկացվող հարկադիր էլեկտրոնային աճուրդի հրապարակային
ծանուցման և մասնակիցների գրանցման կարգը:
2. Հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է
հարկադիր կատարման ծառայության էլեկտրոնային կայքում (այսուհետ՝ Կայք), որը պետք է
պարունակի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները:

3. Հարկադիր էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար մասնակիցը լոտի մեկնարկային գնի 5 %-ի չափով նախավճար է սառեցնում էլեկտրոնային պլաստիկ քարտի միջոցով, կամ վճարում Ծառայության ստորաբաժանման դրամարկղ, կամ փոխանցում դեպոզիտ հաշվին:

4. Մասնակցի գրանցումը իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Կայքում նշված կարգով ներմուծելով էլեկտրոնային պլաստիկ քարտի կամ աճուրդի մասնակցի քարտի տվյալները (ծածկանունը և ծածկագիրը):

5. Ծառայության դրամարկղ կամ դեպոզիտ հաշվին նախավճար վճարած մասնակցին Ծառայության կողմից տրվում է աճուրդի մասնակցի քարտ, որում նշվում են քարտի տրման օրը, Ծառայության ինտերնետային Կայքի հասցեն, մասնակցի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, աճուրդի մասնակցի քարտի տվյալները (ծածկանունը և ծածկագիրը):